ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ Վերջին զանգի առթիվ

22.05.2026

Սիրելի՛ շրջանավարտներ, հարգելի՛ ուսուցիչներ, ծնողներ և կրթության ոլորտի ներկայացուցիչներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Վերջին զանգի կապակցությամբ:

Այս օրը յուրահատուկ սահմանագիծ է յուրաքանչյուր շրջանավարտի կյանքում՝ լի հուզմունքով, հիշողություններով, երազանքներով ու նոր սպասումներով:

Դպրոցական տարիներն ավարտվում են, սակայն սկսվում է առավել պատասխանատու ու կարևոր մի փուլ, որտեղ ձեր գիտելիքը, աշխատասիրությունն ու արժեհամակարգը դառնալու են ձեր գլխավոր ուղեցույցները:

Սիրելի՛ շրջանավարտներ, վստահ եմ՝ ձեզանից յուրաքանչյուրն իր ներդրումն է ունենալու մեր համայնքների, մեր պետության զարգացման ու հզորացման գործում:

Մնացե՛ք համարձակ, նպատակասլաց և երբեք չկորցնեք հավատը ձեր ուժերի նկատմամբ:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում ուսուցիչներին՝ նվիրված աշխատանքի, համբերության և սերունդներ կրթելու պատասխանատու առաքելության համար: Շնորհակալություն նաև ծնողներին՝ մշտական աջակցության և հոգատարության համար:

Թող այս օրը դառնա նոր հաջողությունների, մեծ ձեռքբերումների և խաղաղ ու բարեկեցիկ ապագայի սկիզբ:

Բարի երթ ձեզ, սիրելի՛ շրջանավարտներ: